«Ամերիաբանկ» ՓԲԸ
+(37410) 561111, office@ameriabank.am

ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ընդունվել է Բանկի Տնօրինության 10.07.2008թ-ի թիվ 7 որոշմամբ,
ընթացիկ խմբագրությունը՝ 17.03.2023թ թիվ 03/31/23 որոշմամբ, և ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ռեզիդենտ անձանց գծով միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով, արտարժույթով գումարի նկատմամբ տոկոսներով արտահայտված միջնորդավճարների դեպքում հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած՝ տվյալ արտարժույթի անկանխիկ վաճառքի փոխարժեքը: ՀՀ ոչ ռեզիդենտ անձանց գծով միջնորդավճարները գանձվում են՝ սույն փաստաթղթում ՀՀ դրամով սահմանված սակագների դեպքում՝ ՀՀ դրամով, արտարժույթով գումարի նկատմամբ տոկոսներով արտահայտված միջնորդավճարների դեպքում՝ տվյալ արտարժույթով:
2. Գանձման ենթակա միջնորդավճարի արժույթով Հաճախորդի ընթացիկ հաշիվներին բավարար միջոցներ չլինելու դեպքում Բանկն իրավունք ունի միջնորդավճարի գումարը կամ դրա մի մասը փոխարկել հաճախորդի ունեցած այլ արժույթով միջոցներից՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ ՀՀ դրամը այլ արժույթի փոխարկելիս՝ Բանկի կողմից սահմանված տվյալ արժույթի անկանխիկ վաճառքի փոխարժեք/ներ/ը, այլ արժույթը ՀՀ դրամի փոխարկելիս՝ անկանխիկ առքի փոխարժեք/ներ/ը՝ հաճախորդի տարբեր արժույթով հաշիվներից փոխարկումը կատարելով իր կողմից որոշված հերթականությամբ, եթե հաճախորդի կողմից այլ հերթականություն չսահմանվի:
3. Բանկային գործառնությունների կատարման հետ կապված փոստային, հեռագրային, հեռախոսային, SWIFT, տելեքսային և ֆաքսիմիլային կապի ծախսերը, ինչպես նաև երրորդ բանկ/եր/ի ծախսերը (բացառությամբ երաշխիքների թողարկման միջնորդավճարի և ակրեդիտիվների և պահուստային ակրեդիտիվների հաստատման միջնորդավճարի) գանձվում են լրացուցիչ՝ դրանց փաստացի առաջացման հիմքով:
4. Բանկը կարող է գործող սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ Բանկի ինտերնետային կայքում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև հաճախորդի կողմից ընտրված հաղորդակցման նախընտրելի այլ եղանակով հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և

12CIB PL 72-09, Խմբ. 9
Ուժի մեջ է 05.04.2023թ.-ից

լրացումները ուժի մեջ են մտնում Բանկի կողմից սահմանված պահից, բայց դրանց մասին հաճախորդներին ծանուցելու օրվանից ոչ շուտ, /ֆիզիկական անձանց դեպքում՝ ոչ շուտ քան ծանուցման օրվանից 7 (յոթ) աշխատանքային օր հետո/, եթե ՀՀ օրենսդրությամբ ծանուցման առավել երկար ժամկետ նախատեսված չէ :

5. Հիմք ընդունելով Բանկի և հաճախորդի միջև երկարատև համագործակցությունը, հաճախորդի գործարքների ծավալները և այլ հիմնավոր պատճառներ՝ Բանկի կողմից կարող են կիրառվել այլ սակագներ և դրույթներ, որոնք սահմանվում են այլ փաստաթղթերով և (կամ) լրացուցիչ կնքվող պայմանագրերով, համաձայնագրերով:
6. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
7. Ծառայությունների դադարեցման դեպքում մինչ այդ վճարված միջնորդավճարները վերահաշվարկման կամ վերադարձման ենթակա չեն:
8. Պարտավորության կետանցի համար օրական տույժը սահմանվում է 0.13%: Ընդ որում տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում:

ՖԱԿՏՈՐԻՆԳ

#	1. ՏԵՂԱԿԱՆ ՖԱԿՏՈՐԻՆԳ	
1.1	Ֆակտորինգային հայտի ուսումնասիրության վճար[i]	15,000 ՀՀ դրամ
1.1.1	Պայմանների վերանայման դիմումի ուսումնասիրության վճար[ii]	10,000 ՀՀ դրամ (եթե այլ վճար սահմանված չէ պայմանագրով)
1.2	Ֆինանսավորման տարեկան տոկոսադրույք	սկսած 12%-ից
1.3	Ֆակտորինգի տրամադրման միանվագ վճար	հաշիվ-ապրանքագրի գումարի 0,6%– 3,0%, նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ
1.4	Ֆակտորինգի տրամադրման ժամկետ (ֆինանսավորման տրամադրման և զիջված պահանջով պարտավորությունների կատարման օրերի միջև ընկած առավելագույն ժամկետ)	120 օր
1.5	Ֆինանսավորման գումարի հարաբերակցությունը զիջվող պահանջի գումարին	առավելագույնը 90%
1.6	Ապահովվածության տեսակը	գրավ, երաշխավորություն, երաշխիք կամ առանց լրացուցիչ ապահովության միջոցների
1.7	Հաճախորդի հաշվի առկայությունը «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում և Ֆինանսավորման գումարների շրջանառությունը այդ հաշվով	պարտադիր
1.8	Հաճախորդի գործունեության պատմությունը	ՀՀ պետ. ռեգիստրում գրանցվելուց հետո՝ առնվազն 1 տարի:
1.9	Զիջված պահանջով հաշվարկներ	անկանխիկ վճարում՝ տարաժամկետ վճարման հնարավորությամբ

#	2. ՏԵՂԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՖԱԿՏՈՐԻՆԳ (տրամադրվում է միայն առանց ռեգրեսի (հետպահանջի) իրավունքի)	
2.1	Ֆակտորինգային հայտի ուսումնասիրության վճար[i]	չի գանձվում
2.1.1	Պայմանների վերանայման դիմումի ուսումնասիրության վճար[ii]	10,000 ՀՀ դրամ (եթե այլ վճար սահմանված չէ պայմանագրով)
2.2	Ֆինանսավորման տարեկան տոկոսադրույք /հաշվարկվում է ֆինանսավորումը տրամադրելու օրվանից՝ ֆինանսավորման համար հաստատված օրերի համար,	սկսած 14%-ից, նվազագույնը՝ 20.000 ՀՀ դրամ
2.3	Ֆինանսավորվող գործարքի նվազագույն գումար	1.000.000 ՀՀ դրամ
2.4	Ֆինանսավորման տրամադրման առավելագույն ժամկետ /ֆինանսավորման տրամադրման և զիջված պահանջով պարտավորությունների կատարման օրերի միջև ընկած առավելագույն ժամանակահատված/	մինչև 120 օր ներառյալ
2.5	Պարտապանի ընդգրկվածություն Բանկի կողմից հաստատված ընկերությունների ցանկում	պարտադիր
2.6	Հաճախորդի հաշվի առկայությունը «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում և Ֆինանսավորման գումարների շրջանառությունը այդ հաշվով	պարտադիր

#	3. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԱԿՏՈՐԻՆԳ	
3.1	Ֆակտորինգային հայտի ուսումնասիրության վճար[i]	30,000 ՀՀ դրամ
3.1.1	Պայմանների վերանայման դիմումի ուսումնասիրության վճար[ii]	10,000 ՀՀ դրամ (եթե այլ վճար սահմանված չէ պայմանագրով)
3.2	Ֆինանսավորման գումարի հարաբերակցությունը զիջվող պահանջի գումարին	Հաշիվ-ապրանքագրի գումարի մինչև 85%
3.3	Ֆինանսավորման տարեկան տոկոսադրույք	սկսած՝ ԱՄՆ դոլար՝ 7% Եվրո՝ 6% ՌԴ ռուբլի՝ 12%
3.4	Ֆակտորինգի տրամադրման միանվագ վճար	հաշիվ-ապրանքագրի գումարի 0.5%-3% նվազագույնը՝ 12,000 ՀՀ դրամ
3.5	Ֆինանսավորման ժամկետ (ֆինանսավորման տրամադրման և զիջված պահանջով պարտավորությունների կատարման օրերի միջև ընկած առավելագույն ժամկետ)	մինչև 180 օր
3.6	Ապահովվածության տեսակը	գրավ, երաշխավորություն, ապահովագրություն, երաշխիք կամ առանց լրացուցիչ ապահովության միջոցների
3.7	Հաճախորդի հաշվի առկայությունը «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում և Ֆինանսավորման գումարների շրջանառությունը այդ հաշվով	պարտադիր
3.8	Դիմելու պահին ՀՀ պետ. ռեգիստրում գրանցման պահից առնվազն 1 տարի ժամանակահատվածն անցած լինելը	պարտադիր
3.9	Զիջված պահանջով հաշվարկներ	անկանխիկ վճարում՝ տարաժամկետ վճարման հնարավորությամբ

#	4. ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՖԱԿՏՈՐԻՆԳ	
4.1	Ֆակտորինգային հայտի ուսումնասիրության վճար[i]	30,000 ՀՀ դրամ
4.1.1	Պայմանների վերանայման դիմումի ուսումնասիրության վճար[ii]	10,000 ՀՀ դրամ (եթե այլ վճար սահմանված չէ պայմանագրով)
4.2	Երկֆակտորային մոդելով աշխատելու դեպքում երաշխիքի տրամադրման միջնորդավճար	Ֆակտորինգի գործողության ժամկետի յուրաքանչյուր եռամսյակի[iii] համար 0.4%-1%, նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 500,000 ՀՀ դրամ
4.3	Դեբիտորական պարտքի հավաքագրման գծով միջնորդավճար	հաշիվ-ապրանքագրի գումարի մինչև 3%, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ
4.4	Հաշիվ-ապրանքագրի ստուգման/ մշակման գծով վճար	5000 ՀՀ դրամ
4.5	Ֆինանսական խորհրդատվական ծառայությունների վճար	ըստ պայմանավորվածության[iv]
4.6	Ապահովվածության տեսակը	գրավ, երաշխավորություն, երաշխիք կամ առանց լրացուցիչ ապահովության
4.7	Ժամկետ	Ըստ պայմանագրի
4.8	Հաճախորդի հաշվի առկայությունը «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում	պարտադիր
4.9	Դիմելուն պահին ՀՀ պետ. ռեգիստրում գրանցման պահից առնվազն 1 տարի ժամանակահատվածն անցած լինելը	պարտադիր

[i] Նշված վճարը գանձվում է ֆակտորինգի հաստատման դեպքում:
[ii] Պայմանների վերանայման դիմումի ուսումնասիրության վճարը գանձվում է վերանայման դիմումի բավարարման դեպքում Հաճախորդի՝ Բանկում գործող հաշիվներից՝ հիմք ընդունելով Բանկի

համապատասխան ստորաբաժանման կողմից այդ դիմումի հիման վրա կատարված վերլուծության եզրակացությունը/տեղեկանքը: Սույն սակագնի իմաստով պայմանների վերանայում չեն համարվում կնքված Դրամական պահանջի զիջման հայտի պայմանների փոփոխությունները, եթե այլ բան չի սահմանվում Բանկի իրավասու մարմնի որոշմամբ:

[iii] Միջնորդավճարը հաշվարկելիս ոչ ամբողջական եռամսյակը համարվում է ամբողջական եռամսյակ: Վճարը գանձվում է միանվագ՝ տրամադրման/փոխանցման պահին գործողության ողջ ժամկետի համար:

[iv] Սակագինը որոշվում է Բանկի և հաճախորդի միջև ձեռք բերված գրավոր համաձայնությամբ:

ԱԿՐԵԴԻՏԻՎ (LC)

#	1. ԳՆՈՐԴԻ ԱԿՐԵԴԻՏԻՎ (Հաճախորդի պատվերով թողարկվող Ակրեդիտիվ)	
1.1.	Չհաստատված ակրեդիտիվի թողարկում	Յուրաքանչյուր եռամսյակի[v] համար 0.15%, նվազագույնը՝ 40,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար[vi]
1.2.	Այլ բանկի հաստատումով ակրեդիտիվի թողարկում	Յուրաքանչյուր եռամսյակի[v] համար 0.15% նվազագույնը՝ 40,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար [vi], հաստատումը՝ ըստ պայմանավորվածության
1.3.	Ակրեդիտիվի պայմանների փոփոխություն, այդ թվում, չեղյալ համարում	40,000 ՀՀ դրամ, ընդ որում ժամկետի երկարաձգման կամ գումարի ավելացման դեպքում երկարաձգված ժամկետի/ավելացված գումարի մասով կգանձվի նաև թողարկման միջնորդավճար
1.4.	Ակրեդիտիվի ներքո վճարում կամ ակցեպտավորում	0.2%, նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 65,000 ՀՀ դրամ
1.5.	Փաստաթղթերի ստուգում («առանց տարաձայնությունների» փաստաթղթերի ստուգման համար)	40,000 ՀՀ դրամ
1.6.	«Տարաձայնություններով» փաստաթղթերի ստուգում	70,000.00 ՀՀ դրամ կամ համարժեք գործարքի արժույթ (եթե գործարքի մյուս կողմը ոչ ռեզիդենտ է), գանձվում է գործարքի մյուս կողմից

#	2. ՎԱՃԱՌՈՂԻ ԱԿՐԵԴԻՏԻՎ (Ակրեդիտիվ՝ ստացված Հաճախորդի օգտին)	
2.1.	Ակրեդիտիվի կամ ակրեդիտիվի գումարի ավելացման ծանուցում	0.1% ակրեդիտիվի (ավելացման) գումարից, նվազագույնը 40,000 ՀՀ դրամ, առավելագույնը 250,000 ՀՀ դրամ

2.2.	Ակրեդիտիվի այլ փոփոխության, ակրեդիտիվի գծով ստացված այլ հաղորդագրությունների ծանուցում	40,000 ՀՀ դրամ
2.3.	Ակրեդիտիվի տեքստի նախնական կազմում և ակրեդիտիվի պայմանների համաձայնեցում	30,000 ՀՀ դրամ
2.4.	Փաստաթղթերի ստուգում	40,000 ՀՀ դրամ
2.5.	Ակրեդիտիվի հաստատում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից	Ըստ պայմանավորվածության[vii]
2.6.	Ակրեդիտիվի ներքո «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից զեղչում/ֆինանսավորում	Ըստ պայմանավորվածության[vii]
2.7.	Թողարկված ակրեդիտիվի կատարում /վճարում, ակցեպտավորում/	0.5%, նվազագույնը՝50,000 ՀՀ դրամ
2.8.	Ակրեդիտիվի փոխանցում (transfer)	Յուրաքանչյուր եռամսյակի[v] համար 0.15%, նվազագույնը՝ 40,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար
2.9.	Թողարկող բանկի կողմից փոխհատուցման (Reimbursement) հրահանգի կատարում	Ըստ պայմանավորվածության[vii]
2.10.	Փոխհատուցման (Reimbursement) պարտավորության ներքո վճարում	60,000 ՀՀ դրամ

[v] Միջնորդավճարը հաշվարկելիս ոչ ամբողջական եռամսյակը համարվում է ամբողջական եռամսյակ: Վճարը գանձվում է միանվագ՝ տրամադրման/փոխանցման պահին գործողության ողջ ժամկետի համար:
[vi]Վարկային սահմանաչափի ներքո թողարկման դեպքում կգանձվի լրացուցիչ միջնորդավճար՝ Բանկի և հաճախորդի միջև ձեռք բերված գրավոր համաձայնությամբ
[vii] Սակագինը որոշվում է Բանկի և հաճախորդի միջև ձեռք բերված գրավոր համաձայնությամբ:

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ[a]

#	1. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԹՈՂԱՐԿՎՈՂ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ	
1.1.	Երաշխիքների թողարկում Ամերիաբանկի կողմից	
1.1.1.	Դրամական միջոցների սառեցմամբ	Յուրաքանչյուր եռամսյակի[viii] համար 0.3%, գործողության ողջ ժամկետի համար նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ
1.1.2.	Այլ միջոցների գրավադրմամբ	Յուրաքանչյուր եռամսյակի[viii] համար 0.75%, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար
1.1.3.	Այլ միջոցների գրավադրմամբ (պարզեցված գործընթացով՝ մինչև 50 մլն ՀՀ դրամ գումարի երաշխիքների դեպքում)	• մինչև 20 մլն ՀՀ դրամ գումարի Երաշխիքի դեպքում՝ միայն ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և պետական ընկերությունների[ix] կողմից հայտարարված մրցույթների/կնքվող պայմանագրերի[x] շրջանակներում հետևյալ պայմաններով՝ ✓ Ապահովություն՝ Ամերիաբանկում գործող բանկային հաշիվներով շրջանառվող դրամական միջոցների գրավ, մասնակիցների /սեփականատերերի երաշխավորություն, ✓ Երաշխիքի թողարկման միջնորդավճար յուրաքանչյուր եռամսյակի [viii] համար 0.95%, նվազագույնը՝ 25,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար, ✓ Երաշխիքի առավելագույն ժամկետ՝ 2 տարի։ • մինչև 50 մլն ՀՀ դրամ գումարի Երաշխիքի դեպքում՝ ✓ Ապահովություն՝ Ամերիաբանկում գործող բանկային հաշիվներով շրջանառվող դրամական միջոցների գրավ, մասնակիցների /սեփականատերերի երաշխավորություն և անշարժ գույք։ ✓ Երաշխիքի թողարկման միջնորդավճար՝ յուրաքանչյուր եռամսյակի [viii] համար 0.75%, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ գործողության ողջ ժամկետի համար Երաշխիքի առավելագույն ժամկետ՝ 2 տարի։

[a] Սույն սակագները կիրառելի են նաև Պահուստային Ակրեդիտիվների (Standby LC) համար:

1.2.	Դրամական միջոցների սառեցմամբ թողարկված բանկային երաշխիքների գրավը այլ գրավով փոխարինելու դեպքում	Իրականացվում է թողարկման միջնորդավճարի գանձում՝ այլ գրավով ապահովված երաշխիքների համար սահմանված և դրամական միջոցների սառեցմամբ երաշխիքի թողարկման համար գանձված միջնորդավճարի տարբերության չափով
1.3.	Երաշխիքի պայմանների փոփոխություն	35,000 ՀՀ դրամ, իսկ երաշխիքի գումարի ավելացման կամ գործողության ժամկետի երկարաձգման դեպքում ավելացված գումարի/ երկարաձգված ժամկետի մասով կգանձվի նաև երաշխիքի թողարկման միջնորդավճար
1.4.	Երաշխիքի դադարեցում՝ հաճախորդի հրահանգով	25,000 ՀՀ դրամ
1.5.	Վճարում պահանջի դիմաց	Վճարվող գումարի 0.5%-ը, նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
1.6.	Անուղղակի երաշխիքներ/միջնորդ բանկի մասնակցությամբ թողարկված/	Ըստ պայմանավորվածության[xi]

#	2. ԱՅԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԵՐԱՇԽԻՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	
2.1.	«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքի տրամադրում այլ բանկի հանդիպակաց երաշխիքի դիմաց	Ըստ պայմանավորվածության [xi]
2.2.	Երաշխիքի կամ երաշխիքի գումարի ավելացման ծանուցում	0.1% երաշխիքի (ավելացման) գումարից, նվազագույնը 40,000 ՀՀ դրամ, առավելագույնը 250,000 ՀՀ դրամ
2.3.	Երաշխիքի այլ փոփոխության կամ երաշխիքի գծով ստացված այլ	40,000 ՀՀ դրամ

	հաղորդագրությունների ծանուցում	
2.4.	Երաշխիքի ներքո հաճախորդի վճարման պահանջի կազմում	40,000 ՀՀ դրամ

[viii] Միջնորդավճարը հաշվարկելիս ոչ ամբողջական եռամսյակը համարվում է ամբողջական եռամսյակ: Վճարը գանձվում է միանվագ՝ տրամադրման պահին:
[ix]Սույն դրույթի իմաստով ՀՀ պետական կառավարման համակարգի մարմին, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմին, պետական հիմնարկ և պետական ընկերություն են համարվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկներն ու պետական ընկերությունները:
[x] Հաճախորդը պետք է ունենա աշխատանքների կատարման և/կամ ծառայությունների մատուցման առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ (յուրաքանչյուր տարվա համար առնվազն մեկ պայմանագիր)՝ ՀՀ պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ պայմանագրային իրավահարաբերությունների շրջանակներում:
[xi] Սակագինը որոշվում է Բանկի և հաճախորդի միջև ձեռք բերված գրավոր համաձայնությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆԿԱՍՈ

#	1. ԳՆՈՐԴԻ ԻՆԿԱՍՈ (Հաճախորդի անունով թողարկված Ինկասո)	
1.1.	Ինկասո հանձնարարականի (կամ դրա փոփոխության) ծանուցում	20,000 ՀՀ դրամ
1.2.	Ինկասո հանձնարարականի վճարում/ակցեպտավորում	0.2%, նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 65,000 ՀՀ դրամ

#	2. ՎԱՃԱՌՈՂԻ ԻՆԿԱՍՈ (Հաճախորդի պատվերով թողարկվող Ինկասո)	
2.1.	Ինկասո հանձնարարականի թողարկում	0.3%, նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 300,000 ՀՀ դրամ
2.2.	Ինկասո հանձնարարականի փոփոխություն	35,000 ՀՀ դրամ

ԷՍՔՐՈՈՒ

#	1. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ [b]	
1.1.	Էսքրոու ծառայության միջնորդավճար	Մինչև 500 մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարի գործարքների դեպքում՝ միանվագ 0,3% էսքրոու գումարից, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ, առավելագույնը 1,000,000 ՀՀ դրամ; 500 մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարը գերազանցող գործարքների դեպքում՝ համաձայն պայմանագրի՝ նվազագույնը՝ 1,000,000 ՀՀ դրամ
1.2.	Էսքրոու պայմանագրում պայմանների փոփոխություն	35,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր լրացուցիչ համաձայնագիր կնքելու համար, ընդ որում էսքրոու գումարի ավելացման դեպքում ավելացված մասով կգանձվի նաև Էսքրոու ծառայության միջնորդավճար
1.3.	Էսքրոու պայմանագրի ներքո ստացված փաստաթղթերի ստուգում	10,000 ՀՀ դրամ
1.4.	Էսքրոու հաշվից գումարի կանխիկացում	Համաձայն Բանկի Իրավաբանական անձ հաճախորդների համար սակագների[c] գլուխ 3-րդի («Կանխիկով կատարվող գործառնություններ»)
1.5.	Էսքրոու հաշվից գումարի փոխանցում	Համաձայն Բանկի Իրավաբանական անձ հաճախորդների համար սակագների[d] գլուխ 4-րդի («Փոխանցումներ»)

[b] Բանկի հետ Էսքրոու պայմանագիրը կնքող (կնքած) կողմերից առնվազն մեկը Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է:

[c] «Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ իրավաբանական անձ հաճախորդների համար (12CIB/11RBD PL 72-01-02), ընդունվել է Բանկի Տնօրինության 20.05.2015թ. թիվ 03/11/15 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[d] «Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ իրավաբանական անձ հաճախորդների համար (12CIB/11RBD PL 72-01-02), ընդունվել է Բանկի Տնօրինության 20.05.2015թ. թիվ 03/11/15 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

#	2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ	
2.1.	Էսքրոու ծառայության միջնորդավճար	
2.1.1.	Ֆիզիկական անձանց միջև ՀՀ-ում գրանցված անշարժ գույքի կամ տրանսպորտային միջոցի առուվաճառքի դեպքում	Մինչև 100մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարի գործարքների դեպքում՝ 40,000 ՀՀ դրամ; 100մլն - 500 մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարի գործարքների դեպքում՝ 0.15% էսքրոու գումարից; 500 մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարը գերազանցող գործարքների դեպքում՝ համաձայն պայմանագրի, նվազագույնը ՝ 1,000,000 ՀՀ դրամ
2.1.2.	Բանկում ֆիզիկական անձի վարկային պարտավորության գծով գրավի առարկա հանդիսացող գույքի վաճառքի դեպքում	25,000 ՀՀ դրամ
2.1.3.	Մնացած դեպքերում	Մինչև 500 մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարի գործարքների դեպքում՝ միանվագ 0.3% էսքրոու գումարից, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ, առավելագույնը 1,000,000 ՀՀ դրամ; 500 մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարը գերազանցող գործարքների դեպքում՝ համաձայն պայմանագրի, նվազագույնը՝ 1,000,000 ՀՀ դրամ
2.2.	Էսքրոու պայմանագրում պայմանների փոփոխություն	25,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր լրացուցիչ համաձայնագիր կնքելու համար, ընդ որում էսքրոու գումարի ավելացման դեպքում

		ավելացված մասով կգանձվի նաև Էսքրոու ծառայության միջնորդավճար
2.3.	Էսքրոու պայմանագրի ներքո ստացված փաստաթղթերի ստուգում	Չի գանձվում
2.4.	Էսքրոու հաշվից գումարի կանխիկացում	Համաձայն Բանկի Ֆիզիկական անձ հաճախորդների համար սակագներիe գլուխ 3-րդի («Կանխիկով կատարվող գործառնություններ»)
2.5.	Էսքրոու հաշվից գումարի փոխանցում	Համաձայն Բանկի Ֆիզիկական անձ հաճախորդների համար սակագներիf գլուխ 4-րդի («Փոխանցումներ»)

e «Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար (11RBD PL 72-01-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 27.05.2015թ. թիվ 03/59/15 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

f «Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար (11RBD PL 72-01-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 27.05.2015թ. թիվ 03/59/15 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links